



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 29264
Ապրիլ 4, 1986

Արժանաշնորհ
Տ. Բարի Քհնյ. Մէթճեան
Հովիւ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Նախագահ ծխական խորհուրդի
Ուինվուտ.

Սիրելի Տէր Բարի,

Ստացած ենք Եկեղեցւոյդ տեղեկագիրը, որով կը հաղորդուի թէ Փետրուար 23ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական խորհուրդի եօթը անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացուելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրուի ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել ծխական խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական խորհուրդի նոր կազմը՝ կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Տայան Պէյքըր
Պրուս Պալթայեան
Ճէք Համինեան
Կրանթ Մազմանեան
Օհաննէս Մկրեան
Ռապրթ Զաքեան
Կայծակ Թոմասեան